ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԱՇԽԱՐՀԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ԱՐՍԵՆ ԳԼՋՅԱՆ

Աշխարհի մեծ գրողներն իրենց ստեղծագործության մեջ ոչ միայն խորհրդածում են կեցության գաղտնիքների մասին, այլև գեղարվեստորեն շարադրում պատկերացումները: Փիլիսոփայական խորհրդածությունները խորթ չեն նաև հայ գրողներին, որոնք մեծ աշխարհի մեջ փորձել են որոշել հայ ժողովրդի տեղը և լուծում գտնել նրա հիմնահարցերին:

Պարոնյանն ունի՞ աշխարհի գեղարվեստական հայեցակարգ: Պարոնյանագետներից Օշականը, անդրադառնալով խնդրին, փաստորեն, բացասական պատասխան է տվել: «Աշխարհի մը ճարտարապետը ըլլալու բարիքը» Պարոնյանը չունի, գրում է նա, գրողի վաստակն այն է միայն, որ «…մեզի աշխարհ մը ըլլա ձգած»[1]: Իրավացի չէ Օշականը: Պարոնյանի ստեղծագործության համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ գործ ունենք աշխարհի մասին ինքնատիպ հայեցակարգ ունեցող մի հեղինակի հետ, որը բացատրում է կեցության առեղծվածները, հասնում աշխարհի հիմնահարցերի ու վիճակի բազմակողմանի ըմբռնման: Շնորհիվ այդ հայեցակարգի՝ գրողի մտքով, զգացմունքներով, իդեալներով, կենսափորձով լուսավորվում են Տիեզերքը, Երկիրը, Մարդը, երկրային արժեքները, Մեծ Աշխարհի մեջ հայ հերոսների տեղը և պատմական ճակատագիրը:

Փորձենք վերականգնել գրողի աշխարհի գեղարվեստական հայեցակարգը՝ հիմք ընդունելով տարբեր տարիների ստեղծագործությունները:

«Երկրայինի» և «երկնայինի» տեղը մարդու կյանքում: *Պարոնյանը, ռեալիստ լինելով, իդեալները հիմնում է մարդկային կյանքի բովանդակության և դրա իրատեսական գնահատականի վրա: Մարդը կենդանական ծագում ունի, համոզված է նա, և քանի որ այդպես է, նրա կյանքն ու կենսագործունեությունը հնարավոր չէ, ինչպես դեռ հին հույներն էին գիտակցում, կտրել «երկրային», «մարմնավոր» պատճառներից[2]: Մյուս կողմից, մարդու «խմորի» մեջ, բնությունը «երկնային», բարձր նպատակների, իդեալների նկատմամբ ձգտում է դրել:*

Առաջին հայացքից, «երկրային» և «երկնային» նպատակների միջև հակասություն գոյություն ունի, սակայն իրականում դա չկա: Չպետք է շրջանցել այն ճշմարտությունը, որ մարդու մեջ առկա «երկնայինի» ձգտումը, պարզապես, «հողեղեն» հիմքի վրա է բարձրանում: Ուստի, մարդու խնդիրն այն է, համոզ-

---

[1] *Հ. Օ շ ա կ ա ն. Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 4, Երուսաղեմ, 1956, էջ 113:*

[2] *Կեղծ Պլուտարքոսը գրել է. «Ստոիկները ասում են, որ բոլոր պատճառները մարմնավոր են» (Տե՛ս* Антология мировой философии, т. 1. М., 1969, с. 486*):*

ված է Պարոնյանը, որ ոչ թե ապավինի վերացական իդեալների, այլ ճանաչի բնության ու իր կյանքի օրենքները և լուսավորի իր գործնական առաջադիմության ուղին:

Լավագույն կյանքի պատկերացումը*: Պարոնյանը համոզված է, որ մարդկության բացարձակ իդեալը հնարավոր է միայն Օլիմպոսում, աստվածների կյանքում: Իսկ գործնականում տարբեր են իրականությունը և իդեալը: Մարդկանց երկրում, որտեղ բոլորը մահկանացու են ծնվել, «անմահանալու փափագը» լուրջ չէ, երբ չի կապվում իրատեսական իդեալների հետ: «... ինքզինք ուժեղ կարծողն հիշա՞ծ է երբեք Աքիլեսն, ինքզինքն քնարի տեղ դնողն, ըսե՛, ի սեր Պղուտոնի, միտքը չբերե՞ր բնավ Օրփեոսն, զինքն հանճարեղ անվանողն բնավ լսած չէ՞ Աթենաս անունն...»*[3],– *հարցնում է գրողը: Բնականն այն է, շարունակում է միտքը նա, որ մահկանացու մարդն անմահանալու իր ներքին մղումը ծառայեցնի մեծ գաղափարներին և հանուն դրանց ապրի:*

Գրողի գեղագիտական բացարձակ իդեալը հիմնվում է կյանքի մեծ ճշմարտությունների և մարդկության «խմորի» հնարավորությունների վրա: Զուտ բանականության տեսակետից այն խորհրդանշում է մարդկության երազած լավագույն կյանքը, գեղեցկության օրենքներով կառուցված բարձրագույն բանական արժեքները՝ մարդկային զգացմունքների և գործունեության կատարելությունը և շատ եզրեր ունի հին հույն փիլիսոփաների պատկերացումների հետ[4]*:*

Մարդու հանրային կյանքի խորհուրդը*: Մարդը կենդանական ծագում ունի, սակայն բնությունը նրան ընձեռել է անգիտակից վիճակից բարձրանալու, կյանքը գեղեցկացնելու, բնության գլուխգործոցը դառնալու, մարմինը «երջանկության վայր» (5, 212) դարձնելու հնարավորություն, համոզված է Պարոնյանը: Բնությունը մարդու համար վեհ ճանապարհ է սահմանել, որը հետո, ցավոք, մոռացության է տրվել՝ «ծնելամահ» (5, 370) եղել: Մարդու թերությունները՝ ախտերը, ոչ թե բնածին են, այլ արդյունք ճշմարտության ճանապարհից շեղվելու: Մարդը պետք է գիտակցի տիեզերքում իր համար նախասահմանված բարձր դիրքը, սիրի, գնահատի իր ցեղը և «ճշմարիտ, բարի, գեղեցիկ» կյանքով*

---

[3] *Հ. Պ ա ր ո ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1965, էջ 22: Այսուհետ Հ. Պարոնյանի ստեղծագործություններից մեջբերումները (բացի հատուկ նշվածներից), որոնք քաղված են երկերի ակադեմիական ժողովածուից (տասը հատորով, Երևան, 1962-1979), կնշվեն բնագրում փակագծի մեջ՝ համապատասխան հատորով ու էջով:*

[4] *«Մեր էությունը ընդհանուր բնության մի մասն է,– նկատել է Զենոնը,– այդ պատճառով էլ մարդու (բարձրագույն) նպատակը բնության հետ համաձայն, միայն ամեն ինչի մեջ թափանցող ճշմարիտ բանականությամբ ապրելն է. ոչ մի այնպիսի մի բան չանելը, որ արգելվում է համընդհանուր օրենքով: Այն հասու է և Զևսին՝ Գոյը հաստատողին և ղեկավարողին: Ինքը՝ բարերարը, երջանիկ և մարդկային լիարժեք կյանքով է ապրում այն ժամանակ, երբ նրա բոլոր արարքները կատարվում են բոլորի համաձայնությամբ, նրա կամքով, որ կառավարում է ամեն ինչ: Դիոգենեսն ասել է, որ բարձրագույն նպատակն այն է, որ այս կամ այն բանի ընտրությունը կատարվի բանականությամբ, ինչը համապատասխանում է բնությանը: Բնության հետ ներդաշնակ ապրելը նույնն է, ինչ երջանիկ ապրելը» (Տե՛ս* Антология мировой философии, т. 1, с. 483–496*):*

ապրի: Ընդ որում, մարդասիրությունը՝ հումանիզմը, վեհ և ոչ թե «մեռելածին» (5, 370) գաղափար է: Մարդկության արդի անմխիթար վիճակն արդյունք է այն բանի, որ մարդը սկսել է կեղծ արժեքներ դավանել: Ճշմարտասիրությունը, Արժանիքը, Մարդասիրությունը, Բարոյականությունը ստիպված հեռացել են նրա կյանքից, «անդրշիրիմյան աշխարհ» տեղափոխվել (տե՛ս 5, 363):

Հանրային կյանքում բացարձակ իդեալին հասնելու անհնարինությունը մատնանշելով հանդերձ՝ գրողը մարդու նկատմամբ հոռետես չէ: Մարդկանց կյանքի, գործերի, ուրախությունների և հաճույքների մեջ թերի, հեգնանքի արժանի շատ բան կա, բացատրում է նա, սակայն, իր բոլոր թերություններով հանդերձ, անգնահատելի է կենդանի կյանքը: Գրողը «Մահ և ծիծաղ» առակի մեջ հատուկ ընդգծում է այս ճշմարտությունը՝ ես «մահու փաստաբան» չեմ (5, 88):

Պարոնյանի լավագույն կյանքի իդեալն ունի ևս մի շատ կարևոր կողմ, որը չպետք է շրջանցել. Պարոնյանի մեծ հոգին, հաղթահարելով երկրային սահմանափակությունը, հաճախ դուրս է գալիս և թևածում է Տիեզերքում: Եթե բնությունը մարդկանց համար ավելի վեհ նպատակ նախասահմաներ, ապա գրողն իր տաղանդով դարձյալ բարձր առաքելություն կստանձներ նրանց կյանքում:

Մարդկանց երկրի իդեալական պատկերը և աշխարհիկ սիրո ըմբռնումը*: Պարոնյանը Մարդկանց Երկրի իդեալական՝ Ճշմարիտ, Բարի, Գեղեցիկ գեղարվեստական պատկերի կենտրոնում տեսնում է Տղամարդուն ու Կնոջը, իբրև իրական կենսաբեր ու կործանարար ուժերի կրողներ: Առաջատարը Տղամարդն է՝ իրականության Օլիմպոսում Արամազդի ցանկալի դերին հավակնող: Նա գլխավոր դերակատարություն և պարտավորություն ունի մարդկության կյանքը, կենցաղն ու բարքերը բազմաթիվ գայթակղություններից զերծ պահելու, մարդկության ճիշտ ընթացքն ապահովելու գործում: Տղամարդու կողքին անփոխարինելի տեղ ունի Կինը: Նրա մեջ միահյուսված են կառուցողական և կործանարար ուժերը: «Օրենքները հաստատողները այրերն են, իսկ բարքերը հաստատողները կանայք են» (7, 331),– գրում է Պարոնյանը: «Շատ անգամ կնկան մը արտասուքին մեկ շիթը օվկիանոսին ալիքներեն ավելի վտանգավոր է. գիտե՞ք որքան նավաբեկություններ եղած են և կ՚ըլլան շիթ մը արտասուքի լայնածավալ ծովուն մեջ» (5, 131): Կնոջ կոչումը, բնությունից սահմանված, շատ բարձր է, սակայն արդի դարաշրջանում, ցավոք, չափազանց «հողեղեն» կերպարանքով է ներկայանում: «Կնոջ գեղեցկությունը կը հաստատե, որ ժամանակավ դրախտի բնակիչն էր նա» (7, 339),– գրում է Պարոնյանը, ինչը չես ասի նրա արդի կերպարի մասին: Դրությունը շտկելու, Մարդկանց Երկրի բարձր իդեալները վերականգնելու տեսակետից՝ գրողը կանանց պարտավորեցնում է. բանականության լույսով լուսավորել իրենց ուղին. «Բնությունը կնոջը ըսած է՝ գեղեցիկ եղիր, եթե՝ կրնաս, խելացի՝ եթե՝ կուզես, բայց պետք է որ պատվավո՛ր ըլլաս» (7, 335): Գրողն այդ խնդրում կարևորում է նաև Տղամարդու դերը՝ նրան խորհուրդ տալով ըմբռնել Կնոջ հակասական էությունը և խելացի վերաբերել նրան. Առաջին Տղամարդը՝ Ադամը, ժամանակին չհասկացավ կնոջ բարդ էությունը և խաբվեց, այդ պատճառով արտաքսվեց Աստծո Դրախտից: Նորագույն սերնդի*

Տղամարդու համար Երկրային Դրախտն էլ կարող է Դժոխքի վերածվել, եթե արդի դարաշրջանում նախորդի սխալը կրկնի: Կնոջ բարդ էությունը թելադրում է, պատգամում է Պարոնյանը, որ նա բանականության շրջանակից դուրս չգա, մանավանդ, սեռական պահանջմունքի հարցերում, և հատուկ զգուշացնում է. «Աշխարհակալությունը կանանց համար չէ», դուք մե՛կ անգամ իրավունք ունեք նվաճել՝ ձեր ամուսինների՛ն (տե՛ս 6, 334): Իսկ Տղամարդուն պարտավորեցնում է հսկել Կնոջը՝ հանուն նրա իսկ շահի: «Եթե կնոջ մը չարիք հասցնել կուզես,– գրում է նա,– թող որ ուզածն ընե» (7, 333):

Լուսավորիչները գտնում էին, թե մարդկանց «կյանքի հիմնական կանոնն այն է, որ նրանք կատարելագործեն իմացականությունը և ամբողջովին առաջնորդվեն դրանով»[5]: Լուսավորիչները, շրջանցելով սիրո զգացումը, մարդու կյանքում առաջնային էին համարում միայն «բարեկամության ու բարյացակամության» «առաքինությունները»[6]: Սվիֆթի հերոսուհին, երբ կարոտով համբուրում է օտարությունից վերադարձած ամուսնուն, վերջինս սիրո այդ դրսևորումը ոչ միայն մերժում է, այլև դրանից զզվանք է զգում (կնոջ վարմունքը նրան թվում է զազրելի անասունին բնորոշ)[7]:

Պարոնյանի հայացքը աշխարհիկ սիրո վերաբերյալ էականորեն տարբերվում է լուսավորիչներինից, նաև՝ Սվիֆթինից: Պարոնյանը երկրային սիրո ըմբռնման հարցում դատում է Վերածննդի մեծերի նման: Տղամարդու և Կնոջ Սերն արժանի է փառաբանության, համոզված է գրողը: «Կյանքը ծաղիկ մ'է,– գրում է նա,– իր մեղրն է սերը» (7, 331): Սերն ունի վեհացնող նշանակությունը, ընդգծում է նա. «Ինչպես արևն՝ սերն ալ կը լուսավորե» (7, 353): Գրողը ժպիտով է վերաբերում սիրո պատճառած տառապանքին. «Չկա գերի մը, որ սիրո գերիին չափ տանջվի» (7, 343), քանի որ այն բոլոր դեպքերում ցանկալի է: Սիրո համբույրը կյանք է պարգևում[8], Վերածննդի մեծերի նման համոզված է նա:

Շեքսպիրը, սակայն, գիտակցում էր սիրո ոչ միայն վեհացնող, այլև կործանարար ուժը և մարդկանց ուշադրությունը հրավիրում էր դրա վրա (Ռոմեոյի ու Ջուլետի մահը պայմանավորված է ոչ թե կենցաղային պարզ թյուրիմացությամբ, այլ հենց այդ օրենքով): Պարոնյանն իր դարաշրջանի համար հրատապ է համարում սիրո ամբողջական ըմբռնման և դրսևորումներին առնչվող հիմնահարցերի վրա ուշադրությունը սևեռելը՝ գիտակցելով, որ դրանք անմիջականորեն կապվում են դարաշրջանի մարդու առաջադիմության ուղիների որոնման հետ:

Տարբերակելով աշխարհիկ մարդու «կրոնական» (աշխարհիկ, բայց՝ իդեալական) և «քաղաքական» (աշխարհիկ, բայց՝ գործնական) զգացմունքները, Պարոնյանը վերապահումով է մոտենում վերջինիս, բացատրելով, թե այն միշտ չէ, որ սիրո բյուրեղյա զգացմունք է: Դրա հիմքում սովորաբար ընկած է նյութա-

---

[5] *Ջ. Սվիֆթ. Գուլիվերի ճանապարհորդությունները, Երևան, 1958, էջ 364:*

[6] *Նույն տեղում, էջ 365:*

[7] *Նույն տեղում, էջ 398:*

[8] *Տե՛ս Վ. Շեքսպիր. Ընտիր երկեր երկու հատորով, հ. 1, Երևան, 1964, էջ 747:*

կան-հուզական բովանդակությունը, բացատրում է գրողը: Աշխարհիկ մարդը, «սիրելով», հաճախ ձգտում է «պայմանադրությամբ» (5, 252) իրենը դարձնել հակառակ սեռի այն անձին, որը նրա վրա զգացական տպավորություն է թողնում և նրանից հաճույք ստանալ: Նման «սիրո» հիմքում ոչ թե հոգեկանի, այլ մարմնականի ձգտումն է, համոզված է գրողը, երբ սիրո առարկան կարող է շարունակ փոխվել: Դա, բուն իմաստով, «սեր չէ» (5, 252): Պարոնյանի համոզմամբ, Սիրո աղբյուրը ոչ այնքան անհատի սեռական, որքան՝ մարդկային արժանիքի նկատմամբ պահանջմունքն է: Վերջինս գնահատելով է, որ տղամարդը սիրում է կնոջը, կինը՝ տղամարդուն: Սիրելու բուն խորհուրդը մարդու վեհացումն է, կենդանականության հաղթահարումը:

Սիրո և վսեմ հաճույքի գրավական է այն, որ անհատները «խորհելու միտք», «գործելու կամք» և, հետո միայն, «սիրելու սիրտ» ունենան, (5, 241): Ճշմարիտ սերը խարսխվում է իրար արժանի զույգի փոխադարձ խոր զգացմունքի և պատասխանատվության, այսինքն՝ մարդկային էության այնպիսի փոխադարձ արժևորման ու գնահատման վրա, որը նրանց դարձնում է միմյանց համար անփոխարինելի: «Քաղաքական ամուսնության մեջ,– գրում է Պարոնյանը,– երիտասարդ մը կրնա ընտրել այնպիսի աղջիկ մը, զոր կը սիրե, բայց կրոնական ամուսնության մեջ այնպիսի աղջիկ մը ընտրելու է, ուսկից որ սիրված է, որովհետև սիրելը հաճույք մ'է, իսկ սիրվելը՝ երջանկություն: Կրոնական ամուսնության մեջ մարդիկ ավելի երջանկություն փնտրելու են, քան՝ հաճույք» (8, 374):

Չպետք է անգիտանալ, որ Մարդու՝ կենդանիների «ավագ եղբոր» «խմորի» մեջ ինչ տեսակ զգացմունք ասես չկա, որ թյուրիմացաբար «սեր» է հորջորջվում, ավանդում է գրողը: Ախտավոր մարդիկ սիրո անվան տակ հաճախ «անմիտ և անխելք և տարօրինակ սիրահարների կամ ամուսինների» «նախապաշարմունքներ» (5, 268) և անլուրջ, պարսավելի ցանկություններ են ունենում, իսկ մանր բանաստեղծները՝ դրանք գովերգում են: «Բանաստեղծից ոմանք», հեգնում է գրողը, հեշտությամբ մեկ «կնկանից» մյուսին են վազում՝ ամուսնանալու, այսինքն՝ «հոգվո երկրորդ հատոր մը գտնելու»: Սիրո մասին նման պատկերացում ունեցող բանաստեղծները (և մարդիկ) ծաղրի են արժանի, քանի որ «մարմնապիշ» են՝ շուտ մխիթարվում են «հնգոտան տաղ» գրելով: Նրանց հոգին շատ «հատորներ» ունի. նրանց սերը զարմանալիորեն շուտ է ծնվում և վաղ մեռնում, մինչդեռ ճշմարիտ բանաստեղծի կամ սիրահարի սերը «յուր առարկայի հող դառնալուն պես» պետք է, որ չմոխրանար... Սիրո մասին զարմանալի պարզունակ պատկերացում է ձևավորվել, համաձայն որի՝ «պոետ մը կրնա քսան կնկան հետ ամուսնանալ և ամենուն վրա մեյմեկ տաղ գրելով զանոնք սիրած ըլլալ» (10, 373): «Այս տեսակ բանաստեղծությունը ուրիշ բան չէ, եթե ոչ միայն հանգավոր վայրենություն» (10, 373): Տղամարդու և կնոջ սերը ենթարկվում է սիրո համընդհանուր օրենքին: Ճշմարիտ սիրող կինը կամ տղամարդը նույն կերպ նաև ուրիշի սիրել չի կարող, քանի որ «Սիրտն չնմանիր մեր ոտքին կամ ձեռքին, որ կառավարենք զայն մեր ուզած եղանակով» (5, 267):

Պարոնյանը աշխարհիկ վեհ *սերը կապում է ամուսնության, ընտանեկան հարկ ստեղծելու մարդկային բարձր պահանջմունքի հետ, քանի որ միայն այդ դեպքում են ամուսինների միջև իրավունքների ու պարտականությունների խելացի բաժանում կատարվում, տղամարդն ու կինը բարոյական բարձր կյանքով են ապրում՝ առողջ զգացմունքներով առաջնորդվելով, մարդկության ու ազգության արմատական շահերի տեսակետից խելացի որոշումներ ընդունելով:*

Իհարկե, իդեալական ամուսնություններ գործնականում հազվադեպ են լինում, քանի որ, մի կողմից, սերը կապանքներ չի հանդուրժում, իսկ ամուսնությունը դրանք պարտադրում է նրան, բացատրում է գրողը, սակայն պետք է գիտակցել, որ ամուսնության գաղափարը կյանքի է կոչվել ոչ թե ինչ-որ մարդկանց քմահաճույքով, այլ մարդկային ցեղի առաջադիմության բարձրագույն շահի պահանջով: Ուստի, «Որքան ալ կանանց և ամուսնության վրա ուզածնիս ըսենք,– ընդգծում է նա,– դարձյալ երկուքեն ալ չենք կրնար զատվիլ» (7, 327): Անվիճելի է, որ՝ «սերն արքայության բանալիներն ունի», մինչդեռ «ամուսնությունն ալ միշտ դժոխքի դռները կը բանա» (7, 352), սակայն երկրորդը, որպես կանոն, այն դեպքերում է լինում, երբ զույգերը թերի են: Թերի տղամարդու և կնոջ համար է ամուսնությունը նմանվում «քավարանի»:

Տղամարդու և Կնոջ խնդիրն այն է, որ սերը և ամուսնությունը միատեղել կարողանան՝ վերջինիս գոյության իրավունքը և բարձրագույն օգուտը «հարգելով» (7, 345): Գրողը բարձր կյանքով ապրել ձգտող երիտասարդներին հորդորում է «սիրահարություն ընել», բայց ապավինելով լուրջ, խոր, «տիեզերական» զգացմունքների, որոնք հանգեցնում են «իրենց սիրածին հետ»[9] ամուսնության:

Երկրի մասին խորհրդածությունները*: Պարոնյանը Երկիրը, Մարդուն, հասարակական կյանքը և արժեքները վերևից՝ Լուսնից է դիտում, «տիեզերական» արժեքների հետ համեմատում՝ ներկայացնելով դրանց* պերճանքն ու թշվառությունը:

Գրողը գտնում է, որ Երկիրը, իր բոլոր թերություններով հանդերձ, շատ «աղվոր» տեղ է: Ուստի, դժգոհում է մարդկանցից, որ իրենց երկրային քաղաքակրթությունը պատշաճ հիմքերի վրա չեն դնում: «Մարդոց խելքին չէի հավնիր»[10],– գրում է Պարոնյանը: Նրանք շփոթված և անորոշության հիվանդությամբ են վարակված, այդ պատճառով «պարզ և ներդաշնակ լեզվով» չեն խոսում. կանայք անգամ «պարզ հագվել»[11] չեն կարողանում: Նոր հասարակությունը կիրթ տղամարդկանց ու կանանց սերունդ չի դաստիարակում: Լուսնի վրա «մարդիկ հասարակապետություն էին»[12],– հիացած շարունակում է գրողը, որը, ցավոք, մերժում են Երկրում: Մինչդեռ դա է առաջադիմության ուղին: Լուսնի վրա մարդիկ հարյուր հիսուն – երկու հարյուր տարի են ապրում, բայց միմյանց դեմ չեն պատերազմում: Ի տարբերություն երկրաբնակների՝ նրանք քաջ գի-

---

[9] *Հ. Պ ա ր ո ն յ ա ն. Երկեր, հ. 9, Երևան, 1938, էջ 134:*

[10] *Նույն տեղում, էջ 136:*

[11] *Նույն տեղում, էջ 137:*

[12] *Նույն տեղում:*

տեն, որ իրար «ջարդելուց», «պատռտելուց»[13] «հազար անգամ ավելի աղեկ է» «խաղաղությամբ ապրելը»: «Լուսնաբնակները, փոխանակ ավելորդ բաներու միտք հոգնեցնելու, փոխանակ զիրար փարատելու համար նորանոր հնարներ հոգալու, ամբողջ միտքերնին, բոլոր հոգինին ալ ավելի հառաջ երթալու համար»[14] են գործածում, հիացած պատմում է գրողը:

Պարոնյանը համեմատում է Երկրի և Լուսնի կյանքի նաև ուրիշ կողմերը: Մարդկանց մտքերն անկատար են, համոզմունք է հայտնում նա: «Մարդ պատվանունը» կրելու արժանի են միայն նրանք, ովքեր օրինավոր «որոշում մը տված» են «իրենց ապրելու եղանակի վրա», և ոչ թե՝ «շաբաթ մը կեղծավոր կ'ըլլան, շաբաթ մը անկեղծ» (4, 331): «Կուզեի, որ մարդիկ երեք հարյուր տարի ապրեին»,– գրում է Պարոնյանը, և աշխատեին ապրելու, կյանքը վայելելու համար*: Կցանկանայի, ընդգծում է նա, որ բոլորը մեկընդմիշտ հասկանային, թե չի կարելի անմեղ մարդկանց կամքի վրա այնպես բռնանալ, նրանց այնքան ճնշել ու հալածել, որ նրանք, «անոթի մնալով», հունից դուրս գան: Աղքատները և հարուստները պետք է գիտակցեն, որ կյանքն իրենց տրված է արդար կերպով վայելելու համար: Ով դա չի հասկանում, նրան պետք է «ծեծել»[15]:*

Պարոնյանը սոցիալական ցանկալի կյանքի վերաբերյալ իր պատկերացումները շարադրել է «Պտույտ մը Պոլսո թաղերուն մեջ» երգիծարանում: Սամաթիայում, դրվատանքով գրում է նա, ծառաներ և տերեր չկան, որովհետև ամենքը իրենց աշխատությամբ և արհեստով են ապրում, հետևապես, հանուն ապրուստի՝ կեղծ «ազնվապետության» (3, 203), ամիրաների և էֆենդիների առաջ ստորանալու կարիք չունեն (3, 200): Երկրային կյանքի վայելքները սիրող, «դրոշակին» «ազատություն, հավասարություն, եղբայրություն» գրած, ազգը, եկեղեցին, դպրոցը սիրող, դրանց կարիքները հոգացող ճշմարիտ մարդիկ են՝ պատրաստ «ազգային կռվին» «հոգով մարմնով» մասնակցելու (3, 203–205): Գրողը Սամաթիային հակադրում է մյուս թաղերն ու բնակավայրերը, որտեղ, նրա համոզմամբ, վարպետորեն դիմակավորված այնպիսի մարդիկ կան, որոնց ինչ լինելը կարող է պարզվել միայն աշխարհի կործանման ժամանակ:

Այս աշխարհի կյանքը մարդու համար բեռ է դարձել, դառնությամբ խոստովանել է Պարոնյանը: Միակ լավ բանը «երազներն» են. կյանքը միայն երազներով է գրավիչ: Մարդը միայն երազի մեջ է «հաջողում» երջանիկ լինել, սոցիալական և հոգեկան խնդիրները բարեհաջող լուծել: «Երազի մեջ խմբագիրը խորհելու և խոսելու ազատությունն միանգամայն կը վայելե»,– հեգնում է գրողը. «Երազի աշխարհին մեջ հայ գրականությունն շատ ծաղկած է, հոն յուր չգիտցած բաներու վրա խոսողին լեզուն կը կտրեն…»[16]:

Երկրային արժեքների գնահատականը*: Պարոնյանը Երկրային դրախտի արժեքային համակարգը երգիծաբար ներկայացրել է, մասնավորապես, «Զբո-*

---

[13] *Նույն տեղում, էջ 138:*

[14] *Նույն տեղում:*

[15] *Նույն տեղում, էջ 158:*

[16] *«Լույս», Կ. Պոլիս, 1879, թիվ 8:*

սանք» (5, 187–205) երգիծապատումում՝ իր դարաշրջանի մարդկանց վայելքներին վերաբերելով փիլիսոփայորեն, մերժելով դրանց ռոմանտիկական ըմբռնումը, նկատելով յուրաքանչյուրի հիմքում ընկած առարկայական-հուզական բովանդակությունը: Գրողը, ամենից առաջ, համեմատության եզրեր է նկատել Երկրային դրախտի, հին հունական Օլիմպոսի և Դժոխքի՝ Հադեսի թագավորության միջև: Եվ, այդուհանդերձ, այն ընդունում է որպես հաճելի վայր: Երկրային դրախտի մասին պատկերացում տալու նպատակով պատկերել է մարդկանց մի խրախճանք, որին մասնակցում են ոչ թե Արամազդն ու Պղուտոնը, այլ երկրաբնակ հերոսները՝ Ծիծաղը, Բարոյականը՝ երգիծաբանի «շուները» (7, 282), Մոմոսը՝ ծաղրի և պարսավանքի ոգին, Միղենոսը՝ անտառների, աղբյուրների ոգին, որը միաժամանակ, սատիրների ավագագույնն է՝ ճաղատ գլխով, տափակ քթով, հաստ մարմնով, Բաքոսը՝ խաղողագործության ու գինեգործության հովանավորը, Հիպնոսը՝ քնի աստվածը, մարդկանց երկրի Աստղիկի՝ սիրո և գեղեցկության աստվածուհու դուստրերը՝ մարդկային կյանքին և բնությանը հրապույր տվող ու գեղեցկություն պարգևող աստվածուհիներ Եվբրոսինեն՝ ուրախությունը, Աղլայիսը՝ թարմությունն ու երիտասարդությունը, Թալիան՝ պայծառությունը, նաև՝ Եվոդոսը՝ Էոլի կղզու հողմերի տիրակալը, հավերժահարսերը՝ բնության բարերար ոգիները, Նոտոսը՝ Հարավային, Բորեասը՝ Հյուսիսային, Եվրոսը՝ Արևելյան, Զեփյուռը՝ Արևմտյան քամիները և այլն:

Ի տարբերություն Օլիմպոսի, Երկրում խրախճանքի համար ամեն ինչ փողով են գնում, հեգնում է գրողը: Քանի որ մարդկանց փողը քիչ է, նրանք քչով են բավարարվում: Խրախճանքի վայելքները երկու տեսակ են՝ «փորը» կշտացնելու համադամներ, որոնցից են՝ արքայաձուկը, ապուխտը, մի շիշ օղին, մեկ–երկու հացը, նաև այն ամենը, «ինչ որ կրնա առնվիլ առանց դրամի» (5, 189) և հոգեկան խրախճանքի միջոցներ, որոնց շարքն է դասել Աստղիկի աղջիկներին՝ իրենց պարահանդեսի հագուստներով, հավերժահարսերին, ինչպես նաև՝ հին, պատվական գինու տակառն ու սոխակները: Գրողը մարդկանց խրախճանքի գնալը նմանեցրել է Հադեսի թագավորություն տեղափոխվելուն. դժոխքում Քարոնն էր մեռածների հոգիները նավով տեղափոխում՝ դրամ առնելով, այստեղ նույնն անում է նավավարը: Վերջինս, զվարճասերների դրության մեջ մտնելով, նրանց էժան գնով է տեղափոխում: Անցնելով գետը և բնության գրկում տեղավորվելով՝ մարդիկ, ահա, սկսում են իրենց խրախճանքը: Խնջույքին նախագահում է Բաքոսը, որն առաջին բաժակը բարձրացնում է Դիոգենեսի՝ մարդկանց ճշմարիտ ուղին ցույց տվող իմաստունի կենացը: Խնջույքի ժամանակ, հեգնանքով նկատում է գրողը, մարդկանց ներշնչում են ոչ թե մուսաները և բանաստեղծները, այլ՝ գինին, որը սափորներից են խմում:

Երբ հոգին վեհացնող երաժշտության կարիք է զգացվում, Ծիծաղը երկրային մուսաներին պատվիրում է անուշ եղանակով և ներդաշնակ բառերով երգ, բայց մուսաներն առարկում են՝ պատճառաբանելով, թե ժամանակ չունեն երգելու: Միղենոսը հորդորում է. գոնե «Դուք ներշնչեցեք, մենք երգենք» (5, 198): «Ներշնչելու ալ սիրտ չունինք այսօր» (5, 198),– լինում է պատասխանը: Մերժման բուն

պատճառն այն է, բացատրում է գրողը, որ հավաքվածների մեջ ճշմարիտ «բանաստեղծի» հոգի ունեցող չկա, իսկ «մուսայի մը համար չկա այնքան ծանր առաջարկություն մը, որքան որ քերթելու օժիտե զուրկ կենդանվո մը ներշնչելու առաջարկությունն» (5, 198): Մարդիկ, համենայնդեպս, հոգին վեհացնող երաժշտության կարիքը բավարարելու համար «իրենցմե են երգում» (5, 198)՝ խմելով քաղցր գինին և բաժակի մեջ փնտրելով իրենց ներշնչող մուսան: Նրանց երգը գինու գովք է: Գինու միայն մեկ «գավաթն մուսաներ կ'արժե», երգում են նրանք: Գինու «մի կաթիլն բանաստեղծության հազար դասագրքի հետ չեմ փոխեր. ա՛ն է, որ կը կրթե ճաշակն, ա'ն է, որ կը վառե սիրտն, կը հուզե ուղեղն և հուզյալ ուղեղի մը արգասիքներն միշտ սիրով կը քաշվին» (5, 198-199):

Մարդկանց Երկրի դրախտում, դիտում է գրողը, նույնիսկ, Բարոյականը անբասիր վարքի տեր չէ, մի քիչ հեշտամոլ է՝ թուլություն ունի հավերժահարսերի և Աստղիկի աղջիկների նկատմամբ: Զարմանալի է նաև, որ Երկրի դրախտի Բարոյականը «կիրակի» օրեր ունի (5, 190): Ինչ վերաբերում է մարդկանց վայելքներին, դրանք ոչ թե բարձրագույն, այլ մասամբ շինծու հաճույքներ են: Հիմա էլ, երբ փչում է Էոլի կղզու հողմերի տիրակալը, ամեն ինչ իրար է խառնվում, ու երկրային հաճույքները կորցնում են թվացյալ գրավչությունը: Մասնավորապես, Ուհիների խորամանկություններն ակնհայտ են դառնում: Նրանց կեղծամները ավրվում են, հաստլիկ երևալու հնարներն ի դերև են ելնում: Բոլորն անիծում են իրենց խորամանկությունները բացահայտող Եվոդոսին: Բացի այդ, երկրային խրախճանքի բարձրագույն պահին անգամ «Զեփյուռն սոխի, սխտորի, պրասայի հոտ» է սփռում (5, 19):

Մարդկանց Երկրի արժեքային համակարգի մեջ գլխավորը «հողեղեն»՝ մարմինը, «փորը» կշտացնող շահագրգռություններն են, գրում է Պարոնյանը: Դրանք են սնում բոլորի երազանքները, զգացմունքները, կրքերը: Գրողը, այդուամենայնիվ, դրվատում է երկրային խրախճանքը՝ սոխակների, մուսաների, Աստղիկի աղջիկների մասնակցությամբ, քանի որ դա, այնուամենայնիվ, կենդանի կյանքի ճշմարիտ դրսևորում է:

Ո՞րն է երկրային դրախտում ապրելու ճիշտ կերպը, հարցնում է Պարոնյանը և պատասխանում. մարդը «բնության շքեղության» նկատմամբ չպետք է «անզգա» «գյուղացի» կամ նրա «գաղտնագրերը» «կարդալ չգիտցող գրապահ» լինի (9, 317): Նա, բանիմացորեն դիրքավորվելով բնության նկատմամբ, պետք է կարողանա անբավ հարստություններից օգտվել և Երկրային դրախտը լիաբուռն վայելել:

Պարոնյանի աշխարհի գեղարվեստական հայեցակարգի բաղադրիչները՝ «երկրայինի» և «երկնայինի» տեղը մարդու կյանքում, լավագույն կյանքի պատկերացումը, մարդու հանրային կյանքի խորհուրդը, մարդկանց երկրի իդեալական պատկերը և աշխարհիկ սիրո ըմբռնումը, երկրի մասին խորհրդածությունները, երկրային արժեքների գնահատականը համակարգելով՝ մենք ավելի ենք մոտենում ստեղծագործության գեղարվեստական հարստության բովանդակային շերտերի խորքային ըմբռնմանը:

ХУДОЖЕСТВЕННАЯ КОНЦЕПЦИЯ МИРА АКОПА ПАРОНЯНА

АРСЕН ГЛДЖЯН

Р е з ю м е

Великие писатели мира в своих произведениях размышляют о тайнах бытия. Философские размышления не чужды также армянским писателям, особенно великому сатирику А. Пароняну. Его художественная концепция мира –представление лучшей жизни людей, место “земного” и “небесного” в бытие человека, идеальная картина земли людей и понятие светской любви, оценка земных ценностей.